

Անհապաղ թողարկման համար
28-ը հուլիսի, 2009թ.

Պատասխանատու՝ Տաթևիկ Զոհրաբյան,
ՀՌԿԿ-Հայաստանի ՏՀՆ ծրագրի ղեկավար
է-փոստ՝ tatevik@crcc.am, հեռ. 58-1330, 58-1450

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնները հրապարակելու են ընտրանքային հարցման հիմնգերոդ շրջափուլի արդյունքները

Հայաստանի Հանրապետություն, Երևան – 2009թ. հուլիսի 28-ին, ժամը 11-ին Կոնգրես հյուրանոցի (Իտալիայի փող 1) Պիկասո սրահում կայացավ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների (ՀՌԿԿ) կողմից 2008թ. անցկացված ընտրանքային հետազոտության շնորհանդեսը: Թվով արդեն հիմնգերոդ այս հետազոտությամբ հարցվել են Հարավկովկասյան երկրներում պատահականորեն ընտրված շուրջ 6.000 տնային տնտեսությունների չափահաս անդամներ, որոնք պատասխանել են ավելի քան 140 հարցերի:

ՀՌԿԿ տվյալների հավաքագրման այս նախաձեռնությունը բացառիկ հնարավորություն է տալիս զուգահեռներ անցկացնելու Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և քաղաքական զարգացումների, ինչպես նաև այդ հանրապետությունների գյուղական ու քաղաքային վայրերում զարգացումների միջև: 2008թ. ուշ աշնանը հավաքագրված տվյալներից բացահայտվում է ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը հարավկովկասյան երկրների, մասնավորապես Հայաստանի տնային տնտեսությունների վրա. Թեև ռեսպոնդենտների մոտ 57%-ը իրենց տնային տնտեսության կացությունը այլ տնային տնտեսությունների մեծ մասի համեմատությամբ համարում են բավարար, հարցվածների 30%-ը մշել է, որ իրենց ունեցած միջոցները բավարար չեն սննդի համար (Ադրբեջանում այդպես են ասել հարցվածների 15%-ը, իսկ Վրաստանում՝ 22%-ը), 37%-ը համարում է, որ (33% և 39%, համապատասխանաբար) միջոցները բավարար են սննդի, բայց ոչ հազուստի համար: Երկարաժամկետ օգտագործման թանկարժեք ապրանքներ և ցանկացած ամեն ինչ կարող են գնել Հայաստանի տնտեսությունների միայն 5%-ը (Ադրբեջանի՝ 10% և Վրաստանի 7%-ը):

Հայաստանում հարցվածների ճնշող մեծամասնությունը (70%) կարծում է, որ պետությունը պետք է ծնողի նման հոգ տանի մարդկանց մասին, մինչդեռ Վրաստանում հարցվածների համարյա կեսը (48%-ը) համարում են, որ պետությունը վարձու աշխատողի նման է և մարդիկ պետք է վերահսկեն պետությանը: Ազգային քաղաքականությանը վերաբերող հարցերը բացահայտել են հանրային կարծիքի ու ակնկալիքների հակասական տարուղղվածությունը. չնայած քաղաքական խառնաշփոթին, Հայաստանում 2008թ. հոկտեմբեր-նոյեմբերի հարցվածների համարյա կեսը հայտնել են, որ բնավ կամ համարյա չեն հետաքրքրվում ազգային քաղաքականությամբ: Ավելին, միայն 23%-ն են ազգային քաղաքականության զարգացման ուղղությունը սխալ համարել, մինչդեռ այն ճիշտ են համարել մոտ 30%-ը: Ուշագրավ է, որ ՀՀ Նախագահին վստահում է 2008թ. հարցվածների 49%-ը (2007-ին՝ 42%), Ազգային ժողովը վայելում է միայն յուրաքանչյուր չորրորդի (2007-ին՝ 19%), իսկ Կառավարությունը՝ 38%-ի (2007-ին՝ 27%) վստահությունը: Առհասարակ, վստահության մակարդակը համարյա բոլոր սոցիալ-քաղաքական հաստատությունների նկատմամբ 2008թ. ավելի բարձր է եղել, քան մեկ տարի առաջ:

Խիստ ուշագրավ են նաև սոցիալական կապիտալը գնահատելու ուղղված հարցերի պատասխանները, որոնք ակներևաբար մատնանշում են հասարակական կապերի թուլացման միտումը. 2008թ. հայաստանում հարցվածներից յուրաքանչյուր երրորդը խոստովանել է, որ դատարկության զգացում ունի, 80 տոկոսը մտերիմ մարդկանց կարոտի, յուրաքանչյուր չորրորդը հաճախ լքվածության զգացում ունի: Հետաքրքիր է, որ հարցվածների 17%-ը հնարավորության դեպքում կմեկնեն Հայաստանից՝ այլ վայրում մշտապես բնակվելու համար, իսկ 48%-ը կմեկնեն ժամանակավորապես բնակվելու համար

ՀՌԿԿ հավաքագրած տվյալների բազաները և հարակից փաստաթղթերը ազատորեն հասանելի են www.crcccenters.org կայքից:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է հիմնադրված 2003 թվականին Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակով: Ելու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և տեղական համալսարանների համագործակցությամբ գործող ծրագիրն քաղաքական գործիչներին առաջարկում է համատեղ հետազոտությունների, դասընթացների և տարածաշրջանային համագործակցության բազմաթիվ հնարավորություններ: Հայաստանում ՀՌԿԿ ծրագրերի մասին տեղեկությունների համար դիմեք:

ՀՌԿԿ-Հայաստան. Երևան 0025, Աբովյան փող., 52, 3-րդ. հարկ: Հեռ./ֆաքս՝ 58-13-30, 58-14-50; crcc@crcc.am; www.crcc.am:
Վրաստանում և Ադրբեջանում ՀՌԿԿ գործունեության մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք www.crcccenters.org: